**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/58579-2019

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-372-15.11.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրա-պետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1968 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-372-15.11.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթով (Պ-372-15.11.2019-ՏՏԳԲ-011/0) սահմանվում են՝

1) կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում անձանց պարտականությունները և սահմանափակումները, կենդանիների նկատմամբ վերաբերմունքի պահանջներն ու արգելված գործողությունները, տնային կենդանիների պահման և խնամքի պահանջները, թափառող կենդանիների, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների, ծառայողական նշանակության, գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ վերաբերմունքի պահանջները, ինչպես նաև կենդանիների բուծման, վաճառքի և օգտագործման շուրջ իրավահարաբերությունները.

2) վարչական կամ քրեական պատասխանատվություն օրենքով սահմանված պահանջների խախտման համար.

3) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում:

Հայաստանի Հանրապետության կառավարության դիտարկումներն ու առաջարկությունները.

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) խիստ խնդրահարույց է դրանում առկա կարգավորումների հիմնավորվածության, նախատեսվող արգելքների և կիրառվող պատասխանատվության համաչափության, ինչպես նաև հասկացությունների սահմանման տեսանկյունից:

Այսպես՝ նախագծի մի շարք կարգավորումների գործնական կիրառումն անիրագործելի է: Օրինակ՝ նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ կենդանի պահողը պարտավոր է ձեռնարկել միջոցներ կենդանիների՝ բարձրություններից ընկնելը կանխելու համար:

Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ արգելվում է անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն, հարձակում և պայքար: Ընդ որում՝ նշված պահանջը չպահպանելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:

Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ արգելվում է կենդանուն թողնելը իր կենսագործունեության համար վտանգավոր միջավայրում:

Նախագիծը համարում ենք հատկապես խնդրահարույց 10-րդ հոդվածի իմաստով: Մասնավորապես, նախագծի 10-րդ հոդվածի խախտումները քրեականացված են: Ընդ որում՝ որևէ տարբերակում դրված չէ կատարվող արարքների միջև, մինչդեռ բոլոր արարքները չեն կարող ունենալ հանրային վտանգավորության նույն աստիճանը:

Այսպես՝ նախագծի 10-րդ հոդվածով արգելվող գործողությունների թվին են դասվում ինչպես տարբեր եղանակներով կենդանուն կյանքից զրկելը, այնպես էլ կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր տիրապետողի կամ համապատասխան կացարան հանձնելը, կենդանուն լքելը, կենդանուն թողնելը իր կենսագործունեության համար վտանգավոր միջավայրում, կենդանիների բուծումը կացարաններում, կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը և այլն: Հարկ ենք համարում նշել, որ նշված արարքները չունեն հանրային վտանգավորության նույն աստիճանը:

Նախագծով նախատեսված մի շարք հոդվածների իրավակարգավորումները «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկա են, ինչպես նաև հակասում են նշված օրենքի մի շարք դրույթներին: Մասնավորապես՝ նախագծի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների դրույթները կարգավորվում են «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 35-րդ հոդվածներով, 11-րդ հոդվածի դրույթները՝ 21-րդ և 34-րդ հոդվածներով, 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածների դրույթները՝ 36-րդ, 37-րդ և 33-րդ հոդվածներով:

Նախագծում առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ կարգավորումների անորոշության և օրենսդրական տեխնիկայի պահպանման տեսանկյունից:

I. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի.

1) 1-ին կետի համաձայն՝ կենդանիներ են համարվում «Անասնաբուժության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանված կենդանիները:

«Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ կենդանիներ են համարվում կաթնասունները, թռչունները, երկկենցաղները, սողունները, ձկները, կակղամորթները, խեցգետնակերպեր, խխունջները, միջատները, այլ ողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիներ, որոնք պահվում են մարդկանց կողմից կամ ազատ գոյատևում են:

Այս առումով հարկ է նշել, որ նախագծի նախաբանի համաձայն՝ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված իրավահարաբերությունները և օրենքի գործողությունը չի տարածվում գյուղատնտեսական, վայրի, որսի, ինչպես նաև մարդու կենսագործունեության վրա վնասակար ազդեցություն ունեցող կենդանիների (վնասատու կրծողներ, միջատներ և այլն) հետ կապված իրավահարաբերությունների վրա:

Տվյալ դեպքում, նախագծով նախատեսված հասկացությունում հղում կատարելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով նախատեսված կենդանիների հասկացությանը, հակասություն է առաջանում նախագծի կարգավորման առարկայի և գործողության շրջանակի հետ: Հետևաբար առաջարկում ենք նախագծի հիմնական հասկացություններում հստակ սահմանել այն կենդանիների շրջանակը, որոնց վրա տարածվելու է տվյալ օրենքի գործողությունը:

2) 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ տնային կենդանիներ են համարվում կենդանական աշխարհի վայրի և ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք պահվում են տնային պայմաններում, որոնց տեղաշարժը սահմանափակված է որոշակի տարածքով և որոնց կենսապահովումն իրականացնում է պահողը:

Այս առումով նախևառաջ հարկ է նշել, որ հիշյալ կարգավորումը նույնպես խնդրահարույց է օրենքի կարգավորման առարկայի տեսանկունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի նախաբանի համաձայն՝ օրենքի գործողությունը չի տարածվում գյուղատնտեսական, վայրի, որսի, ինչպես նաև մարդու կենսագործունեության վրա վնասակար ազդեցություն ունեցող կենդանիների (վնասատու կրծողներ, միջատներ և այլն) հետ կապված իրավահարաբերությունների վրա: Հետևաբար այս մասով հիշյալ հասկացության դրույթներն անհրաժեշտ է վերանայել՝ նախագծի ներքին հակասությունները վերացնելու նպատակով:

Բացի դրանից, պարզ չէ «որոնց տեղաշարժը սահմանափակված է որոշակի տարածքով» եզրույթի կիրառությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում անհնար է պատկերացնել ընտանի կենդանիների միայն որոշակի տարածքում տեղաշարժվելու սահմանափակման հնարավորությունը:

3) 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ տնային կենդանիներ են համարվում «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով նախատեսված տնային կենդանիները:

Հիշյալ օրենքի 19-րդ կետի համաձայն՝ տնային կենդանիներ են համարվում այն կենդանիները, որոնք պատկանում են կերակրվող, բուծվող կամ պահվող, սակայն, որ-

պես կանոն, սննդամթերքի ստացման համար չնախատեսված կենդանիների տեսակներին:

Տվյալ դեպքում խնդրահարույց է տնային կենդանիների դեպքում նախագծով նախատեսված հասկացությունների միաժամանակյա առկայությունը, ուստի հնարավոր տարընկալումներից և երկիմաստ ձևակերպումներից խուսափելու համար առաջարկում ենք հստակ սահմանել տնային կենդանիների շրջանակը, որոնց վրա տարածվելու է տվյալ օրենքի գործողությունը:

4) 3-րդ կետի համաձայն՝ թափառող կենդանիներ են համարվում՝ կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք չունեն պահող:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ խնդրահարույց է պահող չունենալու հանգամանքով պայմանավորված թափառող կենդանի համարելու կարգավորումը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշակի ժամանակահատվածում թափառող կարող են համարվել նաև կորած տնային կենդանիները:

5) 4-րդ կետի համաձայն՝ ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիներ են համարվում կենդանական աշխարհի վայրի և ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք պահվում են կենդանաբանական այգիներում, օգտագործվում են կրկեսներում, սպորտային և ժամանցային միջոցառումներում, մրցույթներում, ցուցահանդեսներում, լուսանկարվելու և նկարահանումների համար:

Այս առումով նախևառաջ հարկ է նշել, որ հիշյալ կարգավորումը խնդրահարույց է օրենքի կարգավորման առարկայի տեսանկունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի նախաբանի համաձայն՝ օրենքի գործողությունը չի տարածվում գյուղատնտեսական, վայրի, որսի, ինչպես նաև մարդու կենսագործունեության վրա վնասակար ազդեցություն ունեցող կենդանիների (վնասատու կրծողներ, միջատներ և այլն) հետ կապված իրավահարաբերությունների վրա:

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանված է «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքով:

Հետևաբար այս մասով հիշյալ հասկացության դրույթներն անհրաժեշտ է վերանայել՝ նախագծի ներքին հակասությունները վերացնելու նպատակով:

6) 5-րդ կետի համաձայն՝ ծառայողական նշանակության կենդանիներ են համարվում կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք օգտագործվում են նպատակային նշանակության գործողությունների և ծառայողական նպատակների համար:

Տվյալ դեպքում իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է հստակեցնել, թե որոնք են այն նպատակային գործողությունները, որոնց ժամանակ օգտագործվում են ծառայողական նշանակության կենդանիները և արդյոք հիշյալ գործողությունները նույնական չեն ծառայողական նպատակների հետ:

7) 6-րդ կետի համաձայն՝ գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիներ են համարվում կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակները, որոնք օգտագարծվում են գիտաուսումնական և

գիտահետազոտական փորձարկումներ իրականացնելու նպատակով:

Նախագծի նախաբանի համաձայն՝ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված իրավահարաբերությունները:

Այս առումով պարզ չէ, թե որ կենդանիների վրա են տարածվելու գիտաուսումնական փորձարկումների հետ կապված իրավահարաբերությունները և արդյոք հիշյալ կարգավորումները չեն տարածվելու սույն օրենքի իմաստով «կենդանիներ» հասկացության մեջ ներառված բոլոր կենդանիների, օրինակ՝ գյուղատնտեսական կենդանիների վրա:

Այս առումով հարկ է անդրադառնալ նաև նախագծերի փաթեթում ներկայացված «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել կենդանիների նկատմամբ փորձարկումների և այդ փորձարկումների թույլտվություններին վերաբերող հոդվածները: Այս առումով պարզ չէ վերոհիշյալ օրենքից տվյալ կարգավորման ուժը կորցրած ճանաչելու նպատակը:

Վերոգրյալի կապակցությամբ նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի հիշյալ հոդվածներն ուժը կորցրած են ճանաչվում և համապատասխան դրույթներ են սահմանվում «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքում՝ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի շուրջ ավելի համապարփակ և համալիր կարգավորումներ ունենալու նպատակով»:

Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները նախագծի կարգավորման առարկա հանդես գալ չեն կարող՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենքի նախաբանի համաձայն՝ «Սույն օրենքի գործողությունը չի տարածվում գյուղատնտեսական, վայրի, որսի, ... կենդանիների հետ կապված իրավահարաբերությունների վրա»:

Վերոհիշյալ փոփոխությունների պարագայում կստեղծվի մի իրավիճակ, երբ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի իմաստով կենդանիների, այդ թվում՝ գյուղատնտեսական կենդանիների նկատմամբ փորձարկումների և այդ փորձարկումների թույլտվություններին վերաբերող հարաբերությունները կմնան չկարգավորված:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է հիմնավորել սույն նախագծով նախատեսված կենդանիների նկատմամբ գիտահետազոտական և գիտաուսումնական փորձեր կատարելու և «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակից նույն կարգավորումները հանելու նպատակահարմարությունն ու իրավաչափությունը:

8) 7-րդ կետը նույնպես հստակեցման կարիք ունի: Մասնավորապես՝ առաջարկում ենք նշված կետը համապատասխանեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071[2]–րդ հոդվածի պահանջներին, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ օրենսգրքի նշված հոդվածով հստակ սահմանվում է, որ՝ այլ անձի տիրապետմանը կամ օգտագործմանը կամ խնամքին հանձնված կենդանի պահող են համարվում նաև դրա իրավունքն

ունեցող կամ խնամք իրականացնող անձանց միջև կնքված պայմանագրով նախատեսված անձինք:

9) 8-րդ կետի համաձայն՝ կենդանիների կացարան է համարվում կենդանիների պահման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն ստացած հատուկ հարմարեցված տարածքը և (կամ) կառույցը՝ նախատեսված թափառող, կորած կամ ժամանակավոր պահման հանձնված կենդանիների համար:

Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվելու կենդանիների պահման համար հատուկ հարմարեցված տարածքի և (կամ) կառույցի կողմից թույլտվությունը և ինչ չափանիշների հիման վրա են ընտրվելու տվյալ տարածքները: Բացի այդ՝ պարզ չէ կենդանիների կացարանի իրավական կարգավիճակը՝ պետական, համայնքային, թե մասնավոր:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի դրույթներին:

10) 10-րդ կետով սահմանվում է «նույնականացման անձնագիր» հասկացությունը, որն արդեն իսկ սահմանված է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «21) կենդանիների համարակալում՝ գյուղատնտեսական կենդանիների (բացառությամբ թռչունների, մեղուների) և տնային կենդանիների ականջներին կոդավորված տեղեկություն պարունակող հատուկ պիտակների կամ մարմնի որոշակի մասերին էլեկտրոնային չիպերի՝ կրիչների ամրացում, որը հնարավորություն է ընձեռում անհատականացնելու և հաշվառելու կենդանիներին.», բացի այդ՝ պարզ չէ, թե «պետք է ներառի կենդանի պահողի և կենդանու մասին տեղեկատվություն», կենդանի պահողի մասին ինչ տեղեկատվություն պետք է ներառվի, քանի որ նախագծով սահմանված դրույթներում այն չի կիրառվում:

11) Առաջարկում ենք մասը լրացնել՝ սահմանելով.

ա. «պետական լիազոր մարմին» հասկացությունը, հաշվի առնելով նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները, ինչպես նաև սահմանել, թե որ դեպքերում են նշված մարմինները իրականացնում նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները.

բ. «անկած կենդանի» հասկացությունը:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն անհրաժեշտ է խմբագրել համապատասխան ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթին.

3. Նախագծի 3-րդ հոդվածը խմբագրման կարիք ունի, քանի որ հակասում է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին:

4. Նախագծի 4-րդ հոդվածի՝

1) առաջին մասն առաջարկում ենք շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում Կառավարությունը՝» և, ըստ այդմ, խմբագրելով մնացած կետերը:

Նույն առաջարկը վերաբերում է նաև 5-րդ հոդվածին.

2) 5-րդ մասի համաձայն՝ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանա-

կության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների պահման, խնամքի, բուծման, հաշվառման առուվաճառքի հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր:

Տվյալ կարգավորումից պարզ է դառնում, որ կառավարությանը տրվում են մի շարք ոլորտներում իրավական ակտեր ընդունելու ընդհանրական լիազորություններ, մինչդեռ Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված է, որ լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Հետևաբար նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ հստակ նախատեսելով որոշակի ակտ ընդունելու կառավարության լիազորությունները:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներին:

3) 6-րդ մասի համաձայն՝ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Այս առումով գտնում ենք, որ «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներին:

5. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 113-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում են տեղական ինքնակառավարման մարմինները:

6. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ Երևան քաղաքում՝ նաև վարչական շրջանների ղեկավարների լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:»:

7. Նախագծի 7-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքի պահանջների պահպանման նկատմամբ իրականացվում է հանրային վերահսկողություն: Հարկ է նկատի ունենալ, որ նշված հոդվածով նախատեսված կարգավորումները դուրս են սույն օրենքի նախագծի կարգավորման առարկայից: Փոխարենը նախագծով նախատեսված չէ պետական վերահսկողության վերաբերյալ դրույթներ:

8. Նախագծի 8-րդ հոդվածի վերնագրում խոսք է գնում կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի սկզբունքների մասին, մինչդեռ նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում որպես սկզբունք նախատեսված են կենդանիների բուծման, պա-

հելու, վերջիններիս նկատմամբ կատարվող գործողություններին ներկայացվող պահանջները: Այս առումով գտնում ենք, որ հիշյալ պահանջները սկզբունք չեն կարող հանդիսանալ:

9. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

1) «ա», «բ», «գ», «դ» և «ե» ենթակետերի համաձայն՝ կենդանի պահողը պարտավոր է յուրաքանչյուր կենդանու համար՝ կախված տեսակից, տարիքից և ցեղատեսակից, ապահովել՝ տեղակայման և տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք և պայմաններ, կերի և ջրի բավարար քանակություն, սնվելու և խմելու վայրերից օգտվելու ազատ հնարավորություն, սնվելու և խմելու համար անհրաժեշտ համապատասխան պարագաներ, որոնք հարմարեցված են կասեցնելու համար դրանց աղտոտումը և նվազեցնելու կենդանիների միջև մրցակցությունը, կենսագործունեության համապատասխան միկրոկլիմա:

Այս առումով պարզ չէ և անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ չափանիշների վրա է որոշվելու յուրաքանչյուր կենդանու համար վերոհիշյալ պահանջների և պայմանների համապատասխանությունը,

2) «զ» ենթակետում առաջարկում ենք «բուժօգնություն» բառը փոխարինել «բժշկական օգնություն և սպասարկում» բառերով,

3) 4-րդ կետի համաձայն՝ կենդանի պահողը պարտավոր է չխոչնդոտել իրավասու պետական լիազոր մարմիններին վերահսկողություն իրականացնելիս և անհրաժեշ-տության դեպքում ներկայացնել տիրապետման տակ գտնվող կենդանուն կամ ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը:

Այս առումով հարկ է նշել, որ նախագծում խոսք է գնում միայն հանրային վե-րահսկողության մասին և նախատեսված չեն կարգավորումներ իրավասու պետական լիազոր մարմինների կողմից իրականացվող վերահսկողության վերաբերյալ, հետևաբար անհրաժեշտ է հստակեցնել, թե տվյալ դեպքում ինչ վերահսկողության մասին է խոսքը:

Առաջարկում ենք 4-րդ կետը «պետական լիազոր» բառերից հետո լրացնել «կամ տեղական ինքնակառավարման» բառերով:

10. 10-րդ հոդվածի 2-րդ՝

1) մասի 9-րդ կետն առաջարկում ենք հանել, քանի որ նշված կարգավորումն արդեն իսկ նախատեսված է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով:

2) Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ արգելվում է կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր տիրապետողի կամ համապատասխան կացարան հանձնելը, իսկ նույն մասի 3-րդ կետի համաձայն՝ արգելվում է կենդանուն լքելը:

Այս առումով պարզ չէ և անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ բնույթի գործողություն է իրենից ենթադրում կենդանուն լքելը և արդյոք այն նույնական չէ կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելու կարգավորման հետ,

3) մասը լրացնել 16-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«16) նույնականացման նպատակով կենդանիների վրա առկա չիպերի, միկրոչիպերի, դաջվածքների և համարակալված տարբերանշանների վնասումն ու հեռացումը, որի հետևանքով կենդանին կարող է դուրս մնալ հաշվառումից:»:

11. Նախագծի 11-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝

ա. տնային կենդանի պահողը պարտավոր է ձեռնարկել կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող միջոցառումներ:

Այս առումով պարզ չէ և անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ միջոցառումների մասին է խոսքը և ինչ իրավական ակտով են դրանք սահմանված,

բ. տնային կենդանի պահողը պարտավոր է ապահովել պահմանը ներկայացվող անասնաբուժական պահանջների կիրառումը:

Այս առումով անհասկանալի է անասնաբուժական պահանջները հիշյալ օրենքի կարգավորման շրջանակում դիտարկելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշյալ պահանջների կիրառումը գտնվում է «Անասբաբուժության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայի և գործողության ոլորտի շրջանակում:

2) 2-րդ մասի՝

ա. 2-րդ կետի համաձայն՝ տնային շներ պահողը պարտավոր է նաև 4 ամսական հասակում կամ շուն ձեռք բերելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, շանը ներկայացնել անասնաբուժական զննման և շան նույնականացման նպատակով շան վրա դնել դաջվածք կամ տեղադրել միկրոչիպ, որը ներառում է կենդանու տեղակայման տարբերանշանները և անհատական համարը:

Այս առումով հարկ է նշել, որ նախագծերին կից ներկայացված հիմնավորումից հնարավոր չէ հասկանալ, թե ինչով է պայմանավորված նման կարգավորման նախատեսումը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել տվյալ կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքը և իրավաչափությունն, հատկապես այն պարագայում, երբ խոսք է գնում տնային շների մասին՝ առավել ևս հաշվի առնելով, որ այն լրացուցիչ դրամական բեռ է դնում կենդանի պահողների վրա:

բ. 8-րդ կետի համաձայն՝ տնային շներ պահողը պարտավոր է նաև շների ազատ զբոսանքը կազմակերպել միայն թույլատրելի հանրային վայրերում՝ կենդանիների և մարդկանց անվտանգության ապահովման պայմանով կարճ կապի առկայությամբ:

Այս առումով գտնում ենք, որ ներկայացված չեն համապատասխան տվյալներ, որոնք կվկայեին Հայաստանի Հանրապետության տարածքում բավարար քանակի թույլատրելի վայրերի առկայության մասին, որի պարագայում նման կարգավորման նախատեսումը դառնում է ոչ իրատեսական՝ սահմանափակելով տնային շներ պահողների կողմից՝ շների զբոսանքի կազմակերպման հնարավորությունը:

գ. 9-րդ կետը խմբագրման կարիք ունի, մասնավորապես՝ հասկանալի չէ «առանց ցեղատեսակի շուն» ձևակերպումը:

12. Նախագծի 12-րդ հոդվածի՝

1) վերնագրում խոսք է գնում թափառող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահանջների մասին, մինչդեռ հոդվածում նախատեսված են նաև թափառող կենդանիների բռնումը կազմակերպելու պահանջներին, նպատակին և միջոցների վերաբերող դրույթներ:

Այս առումով նախագծի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները,

2) 1-ին մասի համաձայն՝ թափառող կենդանիների բռնումը կազմակերպվում է տեղական ինքնակառավարման մարմինների և (կամ) լիազորված պետական մարմինների կողմից: Առաջարկում ենք «լիազորված պետական մարմինների» բառերը փոխարինել «իրավասու պետական մարմինների» բառերով:

Անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե ինչ կարգով է իրականացվելու տեղական ինքնակառավարման մարմինների և (կամ) լիազորված պետական մարմինների կողմից թափառող կենդանիների բռնումը,

3) 2-րդ մասի համաձայն՝ թափառող կենդանիների բռնումը իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան մասնագետներ և փոխադրամիջոցներ կենդանիների բռնումը անվտանգ իրականացնելու համար:

Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կազմակերպությունների մասին է խոսքը և ինչ կարգով են դրանք ընտրվում: Պարզ չէ նաև, թե ինչ չափանիշների պետք է համապատասխանեն հիշյալ կազմակերպությունները, ինչպես նաև այդ կազմակերպությունների մասնագետները և կազմակերպության փոխադրամիջոցները և այլն:

4) 3-րդ մասի համաձայն՝ թափառող կենդանիների բռնումը իրականացվում է թափառող կենդանիների գլխաքանակի նվազեցման նպատակով՝ զանգվածային ստերջացման միջոցով: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ թափառող կենդանիների բռնումը իրականացվում է կանխելու համաճարակների, վարակիչ հիվանդությունների տարածումը և վտանգը մարդու առողջության համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշյալ երկու կետերում խոսք է գնում թափառող կենդանիների բռնման նպատակների մասին, ուստի առաջարկում ենք հիշյալ մասերը միավորել:

Բացի այդ՝ հիշյալ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե թափառող կենդանիներին ստերջացնելուց հետո ինչ միջոցառումներ կամ գործողություններ են իրականացվում, մասնավորապես՝ արդյոք այդ կենդանիները կրկին բաց են թողնվում, թե պահվում են կացարաններում:

5) 6-րդ մասի համաձայն՝ թափառող կենդանիների բռնումը պետք է իրականացվի այնպիսի մեթոդներով, որոնք չեն վտանգում կենդանու կյանքը: Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ մեթոդների մասին է խոսքը:

13. Նախագծի 13-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի համաձայն՝ ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների կամ նկարահանման համար օգտագործվող կենդանու հանդեպ արգելվում է կիրառել վարժեցման այնպիսի մեթոդներ, որոնք վնասում են կենդանու առողջությանը: Այս առումով նույնպես անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ մեթոդների մասին է խոսքը,

2) 5-րդ մասի համաձայն՝ կենդանու օգտագործումը միջոցառումների, ցուցադրման, մրցույթների կամ նկարահանման համար պետք է կազմակերպվի՝ ապահովելով անվտանգության համապատասխան նորմեր մարդկանց և այլ կենդանիների համար: Այս առումով պարզ չէ, թե ինչ իրավական ակտով են հաստատված անվտանգության համապատասխան նորմերը:

14. Նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնային կենդանիների բուծումը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից պետք է կազմակերպվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն ստացած բուծարանում:

Այս առումով պարզ չէ, արդյոք տնային կենդանիների բուծումն իրականացվելու է միայն համապատասխան թույլտվություն ստացած բուծարաններում, թե՝ ոչ: Եթե այո, ապա ինչ կարգով և ինչ հիմունքներով է իրականացվելու կենդանիների բուծումը: Արդյոք խոսքը գնում է վճարովի ծառայությունների մասին, թե՝ ոչ: Եթե ծառայություններն իրականացվելու են վճարովի հիմունքներով, ապա հարց է առաջանում, արդյոք դա հավելյալ ֆինանսական ծանրաբեռնվածություն չի առաջացնի, օրինակ՝ ֆիզիկական անձանց համար, որոնք ցանկանում են տնային կենդանիներ պահել:

15. Նախագծի 16-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի համաձայն՝ «Կենդանիների վաճառք իրականացնող կառույցների պատասխանատուները պարտավոր են ապահովել յուրաքանչյուր վաճառքի ենթակա կենդանու համար կերի և ջրի բավարար քանակություն, տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք և պայմաններ»: Մինչդեռ կենդանիների համար, որպես ընդհանուր կանոն, պատասխանատվություն են կրում պահողները և հասկանալի չէ, թե ինչ տրամաբանությամբ է «վաճառք իրականացնող կառույցների պատասխանատուների» համար սահմանվում նման պարտավորություն:

2) 2-րդ մասի համաձայն՝ «Կենդանիների վաճառքը կարելի է իրականացնել միայն մասնագիտացված խանութներում և կենդանիների շուկաներում՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված թույլտվության առկայությամբ և կենդանիների նույնականացման անձնագրերի պարտադիր առկայությամբ»: Մինչդեռ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանվում է՝ «5) կենդանիների, բեղմնավորիչ նյութերի, կենդանական ծագման հումքի և մթերքի, կերատեսակների տեղափոխումը և իրացումն իրականացնել միայն անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայությամբ.»: Ուստի առաջարկում ենք նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել:

Միաժամանակ անհրաժեշտ է հստակեցնել, արդյոք համապատասխան թույլտվության առկայությունը վերաբերում է կենդանի վաճառողին, թե մասնագիտացված խանութներին և կենդանիների շուկաներին:

Ընդ որում՝ նշված կարգավորումը խնդրահարույց է նաև քաղաքացիական շրջանառությունը սահմանափակելու տեսանկյունից, քանի որ փաստորեն կենդանու սեփականատերը զրկվում է իր հայեցողությամբ ազատորեն կենդանին օտարելու հնարավորությունից, ինչը գործնականում կարող է հանգեցնել նրան, որ կենդանիների սեփականատերերը պարզապես ձեռնարկեն միջոցներ՝ օրենքը շրջանցելու համար:

16. Նախագծի 17-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասով նախատեսվում է, որ՝ կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են անհրաժեշտության դեպքում սահմանել կարանտին: Մինչդեռ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ՝ անասնաբուժության ոլորտում տարածքային կառավարման մարմնի պարտականությունն է նաև «լիազոր մարմնի ներկայացմամբ համապատասխան տարածքում՝ համայնքում, բնակավայրում կենդանիների կարանտինային հիվանդությունների բռնկման դեպքում կարանտին սահմանելը և չեղյալ հայտարարելը:»: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք վերոնշված մասը խմբագրել,

2) 5-րդ մասի համաձայն՝ կորած կենդանին կացարանում հայտնվելով ենթարկ-

վում է պարտադիր ստերջացման, եթե 7 աշխատանքային օրվա ընթացքում տիրապետողը չի գտնվում:

Այս առումով գտնում ենք, որ պարզ չէ, թե ինչով է պայմանավորված «7 աշխատանքային օրվա» նախատեսումը, ուստի անհրաժեշտ է սահմանել այնպիսի ողջամիտ ժամկետ, որը բավարար կլինի կենդանու տիրապետողին գտնելու համար:

Բացի այդ, պարզ չէ, թե ինչպես է պարզվելու կենդանին թափառող է, թե տնային:

Ընդ որում՝ նշված կարգավորումը խնդրահարույց է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 183-184-րդ հոդվածների առումով, որոնցով առկա կարգավորումների համաձայն՝ սեփականատիրոջ հայտնաբերման ժամանակահատվածը վեց ամիսն է:

17. Նախագծի 18-րդ և 19-րդ հոդվածները կենսանվտանգության ապահովման հիմնարար խնդիր ունեն, մասնավորապես՝

1) 18-րդ հոդվածի 1-ին մասում հստակ չէ լաբորատոր փորձարարական կենդանիների հարցը, որոնց հետ աշխատում են առողջապահական, կենսաբանական լաբորատորիաները՝ մկներ, ճագարներ, գորտեր և այլն: Այս կենդանիների հետ աշխատանքներ են տարվում նաև որպես մարդկային հարուցիչների պահոցների: Ուստի, հարց է առաջանում, թե վերջիններիս հետ տարվող աշխատանքներն ինչպե՞ս են կարգավորվելու:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի վերաբերյալ հարկ է նշել, որ կենդանիների նկատմամբ գիտահետազոտական փորձարկումներ կատարող կազմակերպությունները պետք է նախ գրանցվեն կենսանվտանգության ապահովման ոլորտի լիազոր մարմնում (Ազգային անվտանգության խորհուրդ), և սահմանվեն այդ կազմակերպություններին ներկայացվող պահանջները, քանի որ գործընթացը կենսանվտանգության ենթակայության հարց է.

2) 19-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում «կազմակերպական-իրավական ձևը,» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ կազմակերպության անվանումն արդեն իսկ իր մեջ ներառում է կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ դրույթներ: Հիշյալ առաջարկությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներից.

3) 19-րդ հոդվածի 6-րդ մասում առաջարկում ենք նշել, թե որ օրենքով է տվյալ հարցը կարգավորվելու:

18. Նախագծի 20-րդ հոդվածի 8-րդ մասն առաջարկում ենք հանել, քանի որ գյուղատնտեսական կենդանիների հետ կապված հարաբերությունները ներկայացված օրենքի կարգավորման առարկա չեն:

19. Նախագծի 22-րդ հոդվածում հստակեցված է, թե որ դեպքում է առաջանում քրեական, որ դեպքում՝ վարչական պատասխանատվություն: Հարկ է նկատի ունենալ, որ նման տարանջատման անհրաժեշտությունը բացակայում է: Բավարար է նշել, որ օրենքի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

20. Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, առաջարկում ենք օրենքի նախագծի 7-րդ գլխի վերնագրում «եզրափակիչ» բառից հետո լրացնել «և անցումային դրույթներ» բառերը, ինչպես նաև՝ նույն գլխի 23-րդ հոդվածը «տասներորդ օրը» բառից հետո լրացնել «բացառությամբ 11-րդ հոդվածի 6-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաստատված համապատասխան կարգի ուժի մեջ

մտնելու պահից» բառերով:

21. Նախագծի հավելվածով հաստատվում է պոտենցիալ վտանգավոր շների ցանկը:

Այս առումով պարզ չէ և անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ չափանիշների հիման վրա է մշակվել հիշյալ ցանկը: Մասնավորապես՝ պարզ չէ, օրինակ՝ գերմանական հովվաշանը, որպես պոտենցիալ վտանգավոր շուն, հիշյալ ցանկում ներառելու հանգամանքը, կամ Յագտերյեր տեսակի շանը, որը հանդիսանում է որսորդական շուն:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագիծն ունի լրացուցիչ հիմնավորման և լուրջ լրամշակման կարիք:

II. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է լրացում կատարել Օրենսգրքի 145-րդ հոդվածում, որի համաձայն՝ իրավունքներն իրացնելիս կենդանիների նկատմամբ արգելվում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սկզբունքներին հակասող վերաբերմունքը:

Այս առումով գտնում ենք, որ հիշյալ կարգավորման նախատեսումն առարկայազուրկ է, քանի որ Օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված է, որ կենդանիների նկատմամբ կիրառվում են գույքի մասին ընդհանուր կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Վերոգրյալից հետևում է, Օրենսգիրքն արդեն իսկ կարգավորել է ընդհանուր կանոններից տարբերվող կանոնների կիրառման հետ կապված հարաբերությունները, հետևաբար հիշյալ օրենսգրքում լրացում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

III. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ օրենսգիրք) փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների խախտումը (բացառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասը) առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երեք հարյուրապատիկի չափով:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի հա-

մաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնց հետևանքով վնաս է պատճառվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գույքին, ինչպես նաև ֆիզիկական անձանց առողջությանը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Այս առումով հարկ է նկատել, որ նախագծով նախատեսված փոփոխության արդյունքում խնդրահարույց է դառնում նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը՝ կատարված իրավախախտման բնույթի հետ անհամաչափության տեսանկյունից, հատկապես այն պարագայում, երբ հիշյալ հոդվածի 2-րդ մասի դրույթները նախատեսում են նույն արարքների կատարում՝ ծանրացնող հանգամանքներում:

Բացի այդ՝ նախագծի 1-ին հոդվածում «113-րդ հոդվածի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «վերնագիրը և» բառերը՝ նկատի ունենալով օրենսգրքի 113-րդ հոդվածի վերնագրում կատարվող փոփոխությունը:

Միաժամանակ առաջարկում ենք քննարկել օրենքի նախագծում «Նախազգու-շացում»-ը որպես տուգանքի միջոցի կիրառում:

IV. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծով նախատեսվում է օրենսգրքի «Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը» վերտառությամբ 258.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ սահմանելով, որ Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, այն է՝ «Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կենդանիների նկատմամբ արգելված գործողություններից որևէ մեկը կատարելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Հիշյալ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից պարզ է դառնում, որ հիշյալ հոդվածի հանցակազմը նախատեսում է «Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կենդանիների նկատմամբ արգելված գործողություններից որևէ մեկի կատարում, մինչդեռ հիշյալ օրենքում նախատեսված գործողությունները խնդրահարույց են՝ իրավական որոշակիության, օգտագործվող ձևակերպումների անհստակության, բավարար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու գործնական հնարավորության և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջների տեսանկյունից: Հետևաբար նախքան հիշյալ գործողությունների համար քրեական պատասխանատվության նախատեսումը, անհրաժեշտ է վերանայել «Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումները՝ հիշյալ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների համատեքստում:

Բացի այդ, հաշվի առնելով արարքների տարբեր հանրային վտանգավորության աստիճանը՝ անհրաժեշտ է նաև տարբերակում մտցնել սանկցիաների միջև:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծին անհրաժեշտ է անդրադառնալ «Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքում առաջարկությամբ բարձրացված խնդիրներ համատեքստում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:

V. «Անասնաբուժության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1. «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել օրենքի 32-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ հոդվածները, 35-րդ հոդվածի 1-ին մասը, 35-րդ հոդվածի 2-րդ մասի 1-14-րդ կետերը, 16-րդ կետի «բ» ենթակետը, 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերը:

Մասնավորապես՝ հիշյալ հոդվածները վերաբերում են կենդանիների բարեկեցությանը, տնային կենդանիների պահման պահանջներին, կենդանիների բարեկեցությունը պահպանելու գործում անձանց պարտականություններին և սահմանափակումներին, ինչպես նաև կենդանիների նկատմամբ փորձարկումների և այդ փորձարկումների թույլտվություններին:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ օրենքի հիշյալ հոդվածներն ուժը կորցրած են ճանաչվում և համապատասխան դրույթներ են սահմանվում «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում՝ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի շուրջ ավելի համապարփակ և համալիր կարգավորումներ ունենալու նպատակով:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքը տարածվում է անասնաբուժության ոլորտում ծագած հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ անասնաբուժության ոլորտում գործունեություն իրականացնող անձանց վրա:

Ավելին, օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանված է կենդանիների հասկացությունը, որի համաձայն՝ կենդանիներ են կաթնասունները, թռչունները, երկկենցաղները, սողունները, ձկները, կակղամորթները, խեցգետնակերպերը, խխունջները, միջատները, այլ ողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիները, որոնք պահվում են մարդկանց կողմից կամ ազատ գոյատևում են:

Այս առումով հարկ է նշել, որ կենդանիների բարեկեցության և այն պահպանելու գործում անձանց պարտականություններին և սահմանափակումներին վերաբերող հոդվածներն ուժը կորցրած ճանաչելու պարագայում բաց են մնում օրենքով նախատեսված այն կենդանիների բարեկեցությանը կամ այն պահպանելու գործում անձանց պարտականություններին և սահմանափակումներին վերաբերող դրույթների հետ կապված հարաբերությունները, որոնք ներառված չեն «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի կարգավորման շրջանակներում:

Ինչ վերաբերում է կենդանիների նկատմամբ փորձարկումների և այդ փորձարկումների թույլտվություններին վերաբերող հոդվածներն ուժը կորցրած ճանաչելուն, հայտնում ենք, որ հիշյալ դրույթներն անհրաժեշտ է վերանայել՝ «Կենդանիների նկատ-

մամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ տրված առաջարկության 1-ին կետի 7-րդ ենթակետի դրույթների համատեքստում:

2. Նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի «ա» ենթակետում նախատեսվող փոփոխությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Քանի որ փոփոխությամբ պայմանավորված, բացառվում է կենդանիներից միայն շների պոչերի անդամատման վիրաբուժական մանիպուլյացիաների իրականացումն առանց ցավազրկման, ուստի գտնում ենք, որ նախատեսվող կարգավորումը ևս հստակեցման կարիք ունի:

VI. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«39) հաստատում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից բխող թույլտվության տրամադրման և այլ կարգեր»:

2. Հաշվի առնելով նախորդ առաջարկությունը նախագծի 1-ին հոդվածը խմբագրել, միաժամանակ լրացվող 58.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասում «պարտադիր» բառը փոխարինել «սեփական» բառով,

2) 2-րդ մասը և դրա 1-ին կետը հանել, քանի որ այն կարգավորված է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,

3) 2-րդ մասի 2-րդ կետից հանել «և ստուգումներ» բառերը,

4) 2-րդ մասի մնացած կետերը շարադրել, որպես 1-ին մասի հերթական կետեր:

Ներկայացված առաջարկությունները վերաբերում են նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

3. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսված թույլտվությունների տրամադրման համար սահմանել տեղական տուրքեր՝ համապատասխան լրացումներ կատարելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, ինչպես նաև առանց համայնքի ղեկավարի կողմից տրամադրված թույլտվության իրականացվող գործունեության համար սահմանել վարչական պատասխանատվություն՝ համապատասխան լրացում կատարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:

VII. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 50.1-ին հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված լիազորությունը (համայնքի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ իրավախախտումը կանխելու համար) վերանայման կարիք ունի, քանի որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առաջին պարբերության 2-րդ կետից բխում է, որ հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը և կանխումը ոստիկանության խնդիրներն են:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծերի փաթեթը լուրջ լրամշակման կարիք ունի և իր պատրաստակամություն է հայտնում շահագրգռված գերատեսչությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ մասնակցելու նախագծերի փաթեթի լրամշակման աշխատանքներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N 1968 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-372-15.11.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս՝ կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 26

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372-15.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված իրավահարաբերությունները:

Սույն օրենքի գործողությունը չի տարածվում գյուղատնտեսական, վայրի, որսի, ինչպես նաև մարդու կենսագործունեության վրա վնասակար ազդեցություն ունեցող կենդանիների (վնասատու կրծողներ, միջատներ և այլն) հետ կապված իրավահարաբերությունների վրա:

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) կենդանիներ՝ «Անասնաբուժության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանված կենդանիները

2) տնային կենդանիներ՝

ա. կենդանական աշխարհի վայրի և ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք պահվում են տնային պայմաններում, որոնց տեղաշարժը սահմանափակված է որոշակի տարածքով և որոնց կենսապահովումն իրականացնում է պահողը,

բ.«Անասնաբուժության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով նախատեսված տնային կենդանիները.

3) թափառող կենդանիներ՝ կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք չունեն պահող.

4) ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիներ՝ կենդանական աշխարհի վայրի և ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք պահվում են կենդանաբանական այգիներում, օգտագործվում են կրկեսներում, սպորտային և ժամանցային միջոցառումներում, մրցույթներում, ցուցահանդեսներում, լուսանկարվելու և նկարահանումների համար.

5) ծառայողական նշանակության կենդանիներ՝ կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք օգտագործվում են նպատակային նշանակության գործողությունների և ծառայողական նպատակների համար.

6) գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիներ՝ կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք օգտագարծվում են գիտաուսումնական և գիտահետազոտական փորձարկումներ իրականացնելու նպատակով.

7) կենդանի պահող՝ տնային կամ թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանուն տիրապետող, տնօրինող և (կամ) օգտագործող 16 տարին լրացած ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ.

8) կենդանիների կացարան՝ կենդանիների պահման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն ստացած հատուկ հարմարեցված տարածք և (կամ) կառույց՝ նախատեսված թափառող, կորած կամ ժամանակավոր պահման հանձնված կենդանիների համար.

9) կենդանիների բուծարան՝ կենդանիների բուծման համար հատուկ հարմարեցված և համապատասխան սարքավորումներով կահավորված, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն ստացած կառույց՝ նախատեսված կենդանիների բազմացման համար.

10) նույնականացման անձնագիր՝ կենդանու նույնականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող միկրոչիպ կամ դաջվածք, որը պետք է ներառի կենդանի պահողի և կենդանու մասին տեղեկատվություն.

11) լիազոր մարմին՝ Կառավարության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում լիազորված պետական մարմին:

Հոդված 2. Կենդանիների բարեկեցությունը և կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը կարգավորող օրենսդրությունը

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում հասարակական հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակն է սահմանել տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, այդ թվում՝ պահման, խնամքի, բուծման, հաշվառման, առուվաճառքի հետ կապված իրավահարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Կառավարության իրավասությունը

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունն է՝

1) ապահովում Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պետական քաղաքականության իրականացումը.

2) հաստատում Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների պաշտպանության և վերարտադրության բնագավառների պետական ծրագրերը.

3) սահմանում Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների օգտագործման կարգը և հաստատում այս ոլորտում պետական ծրագրերը.

4) իրականացնում միջազգային համագործակցություն.

5) ընդունում Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների պահման, խնամքի, բուծման, հաշվառման առուվաճառքի հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր.

6) իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 5. Լիազոր մարմնի իրավասությունը

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում Լիազոր մարմինն է՝

1) մշակում և իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պետական քաղաքականությունը.

2) մշակում Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների պաշտպանության և վերարտադրության բնագավառների պետական ծրագրերը.

3) մշակում Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների օգտագործման կարգը և այս ոլորտում պետական ծրագրերը.

4) իր իրավասության սահմաններում իրականացնում միջազգային համագործակցություն.

5) մշակում Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների պահման, խնամքի, բուծման, հաշվառման առուվաճառքի հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր.

6) օրենքով սահմանված կարգով ընթացք է տալիս սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների, ինչպես նաև գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների պահման, խնամքի, բուծման, հաշվառման առուվաճառքի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի խախտումների վերաբերյալ հաղորդումներին.

7) իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 7. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին օրենքի պահանջների կատարման հանրային վերահսկողությունը

1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հանրային վերահսկողությունը կարող է իրականացվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքացիների կողմից կամավոր սկզբունքով:

2. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հանրային վերահսկողության արդյունքները կարող են ներկայացվել համապատասխան լիազորված պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավապահ մարմիններին և սահմանված կարգի համաձայն ենթակա են ընթացք տալու:

3. Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և քաղաքացիները իրավասու են իրականացնել հետևյալ գործառույթները.

1) արձանագրել կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք պարունակող սույն օրենքով արգելված գործողությունները ֆոտո և տեսանկարահանման միջոցով և ներկայացնել համապատասխան պետական լիազոր մարմնին կամ իրավապահ մարմիններին:

2) մասնակցել բնակչության շրջանում կենդանիների հանդեպ մարդասիրական վերաբերմունքի քարոզչության միջոցառումներին:

3) բնակչության շրջանում նպաստել կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 3.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 8. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի սկզբունքները

1.Կենդանիները բուծվում և պահվում են իրենց աճին, ֆիզիոլոգիական կարիքներին և տեսակին բնորոշ առանձնահատկություններին համապատասխան:

2.Կենդանիների նկատմամբ կատարվող ցավազգաց գործողությունները՝ մանիպուլյացիաները կամ վիրաբուժական միջամտությունները, իրականացվում են ցավազրկման կամ անզգայացման կիրառմամբ:

3.Կենդանի պահողը պարտավոր է ապահովել կենդանիների պաշտպանությանը և բարեկեցությանը ներկայացվող պահանջները:

4.Կենդանիների նկատմամբ դաժան և անպատասխանատու գործողությունների բացառումը:

Հոդված 9. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում անձանց պարտականությունները և սահմանափակումները

1. Կենդանի պահող պարտավոր է՝

1) խնամել կենդանուն և չլքել, իսկ հրաժարվելու դեպքում նախապես տեղեկացնել տեղական ինքնակառավարման մարմիններին և կենդանուն հանձնել նոր տիրապետողի կամ համապատասխան կացարան.

2) յուրաքանչյուր կենդանու համար՝ կախված տեսակից, տարիքից և ցեղատեսակից, ապահովել՝

ա. տեղակայման և տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք և պայմաններ,

բ. կերի և ջրի բավարար քանակություն,

գ. սնվելու և խմելու վայրերից օգտվելու ազատ հնարավորություն,

դ. սնվելու և խմելու համար անհրաժեշտ համապատասխան պարագաներ, որոնք հարմարեցված են կասեցնելու համար դրանց աղտոտումը և նվազեցնելու կենդանիների միջև մրցակցությունը,

ե. կենսագործունեության համապատասխան միկրոկլիմա,

զ. կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների պարտադիր կանխարգելում և բուժում, հիվանդության կամ վնասվածքի դեպքում՝ անմիջական բուժօգնություն,

3) ձեռնարկել միջոցներ կենդանիների՝ բարձրություններից ընկնելը կանխելու համար.

4) չխոչնդոտել իրավասու պետական լիազոր մարմիններին վերահսկողություն իրականացնելիս և անհրաժեշտության դեպքում ներկայացնել տիրապետման տակ գտնվող կենդանուն կամ ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը.

2. Տնային կենդանի պահելու համար ձեռք բերել համապատասխան թույլտվություն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 10. Կենդանիների նկատմամբ արգելված գործողությունները

1. Արգելվում է կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, այն է՝

1) կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատման, ուժեղ հարվածի, մտրակման, հրազենով կրակելու միջոցով.

2) կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան և ցավոտ մահվան.

3) սույն օրենքի դրույթները խախտելով՝ քնեցումը.

4) ողջ վիճակում կենդանու մաշկահանումը, անդամատումը կամ դիազերծում.

5) ողջ վիճակում կենդանուն կրակի վրա նետելը, բարձրությունից կամ փոխադրամիջոցներից նետելը.

6) բոլոր տեսակի կենդանիների մարտերի կազմակերպումը և իրականացումը.

7) թափառող կենդանիների այնպիսի հավաքը կամ բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը.

8) սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ կենդանիների նկատմամբ գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների իրականացումը.

2. Արգելվում է նաև՝

1) վիրաբուժական միջամտության իրականացումն առանց ցավազրկման.

2) կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր տիրապետողի կամ համապատասխան կացարան հանձնելը.

3) կենդանուն լքելը.

4) կենդանուն թողնելը իր կենսագործունեության համար վտանգավոր միջավայրում.

5) կենդանիների բուծումը կացարաններում.

6) կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը.

7) կենդանիների այնպիսի վարժեցումը, որը կարող է տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն.

8) առանց կենդանիների անատոմիական և ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ենթարկել ֆիզիկական ճնշումների.

9) անհրաժեշտ որակավորում և մասնագիտություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժումը.

10) ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանիների առողջությանը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական հիմնավորում ունեն և (կամ) թույլատրված փորձարկման շրջանակներում կատարվելիք բուժում են հանդիսանում.

11) սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութերի կիրառումը.

12) բնական կամ արհեստական բեղմնավորումը, որը կենդանիների առողջության համար վտանգավոր է.

13) կենդանիներին կերակրել այնպիսի կերատեսակներով, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար՝ ելնելով դրանց տեսակից, տարիքից և առողջական վիճակից.

14) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն, հարձակում և պայքար.

15) տնային կենդանիներին բուծել և պահել մսի և մորթու արտադրության նպատակով.

Հոդված 11. Տնային կենդանիների պահման պահանջները

1. Տնային կենդանի պահողը պարտավոր է՝

1) ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի համալիրում ներքին և արտաքին մակաբույծների նկատմամբ կենդանիների բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացմանը:

2) կանխել հասարակական վայրերի աղտոտումը կենդանիների կողմից և ապահովել տեղանքի մաքրումը.

3) ձեռնարկել մարդկանց կամ այլ կենդանիներին չվնասելու միջոցառումներ, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասազերծման ապահովման դուրս հանելը.

4) ձեռնարկել կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող միջոցառումներ.

5) ապահովել պահմանը ներկայացվող անասնաբուժական պահանջների կիրառումը:

2. Տնային շներ պահողը պարտավոր է նաև՝

1) 6 շաբաթականից մեծ հասակի դեպքում ձեռք բերել նույնականացման անձնագիր

2) 4 ամսական հասակում կամ շուն ձեռք բերելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, շանը ներկայացնել անասնաբուժական զննման և շան նույնականացման նպատակով շան վրա դնել դաջվածք կամ տեղադրել միկրոչիպ, որը ներառում է կենդանու տեղակայման տարբերանշանները և անհատական համարը:

3) ցուցահանդեսներին, մրցույթներին մասնակցելու, վաճառքի նպատակով տեղափոխման ընթացքում ունենալ դրանց նույնականացման անձնագրերը.

4) պատվաստումների դեպքում անասնաբուժական ծառայություն կենդանու հետ ներկայացնել նույնականացման անձնագիր.

5) ապահովել կենդանիների առողջության պահպանման համար պահանջվող պատվաստումները, մակաբույծների դեմ մշակումները և այլ անհրաժեշտ միջոցառումները

6) մշտական կապերով (պարաններով) պահելու դեպքում ապահովել ապաստարան և ազատ տեղաշարժման տարածք.

7) փակ տարածություններում պահելու դեպքում ապահովել ամենօրյա զբոսանք.

8) շների ազատ զբոսանքը կազմակերպել միայն թույլատրելի հանրային վայրերում՝ կենդանիների և մարդկանց անվտանգության ապահովման պայմանով կարճ կապի առկայությամբ.

9) քաղաքային տրանսպորտով շների տեղափոխումը կազմակերպել միայն դնչկալի և կարճ կապի առկայությամբ, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր առանց ցեղատեսակի շների.

10) ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով կենդանուն պահել կարճ կապի վրա.

11) պոտենցիալ վտանգավոր շների զբոսանքը կազմակերպել դնչկալի և կարճ կապի առկայությամբ ցանկացած հանրային վայրում.

12) բացառել պոտենցիալ վտանգավոր շների գտնվելը մարզադաշտերում, մանկապարտեզներում, մանկական խաղահրապարակներում, առողջապահական հիմնարկների տարածքներում:

3. Շներ պահողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում?

4. Պոտենցիալ վտանգավոր շների ցանկը սահմանվում է սույն օրենքի հավելված N 1-ում:

5. Տնային պայմաններում պահվող տնային կենդանիների ցանկը սահմանվում է սույն օրենքի հավելված N 2-ում:

6. Նույնականացման անձնագրերի տրամադրման կարգը հաստատվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Հոդված 12. Թափառող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահանջները

1. Թափառող կենդանիների բռնումը կազմակերպվում է տեղական ինքնակառավարման մարմինների և (կամ) լիազորված պետական մարմինների կողմից:

2. Թափառող կենդանիների բռնումը իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան մասնագետներ և փոխադրամիջոցներ կենդանիների բռնումը անվտանգ իրականացնելու համար:

3. Թափառող կենդանիների բռնումը իրականացվում է թափառող կենդանիների գլխաքանակի նվազեցման նպատակով՝ զանգվածային ստերջացման միջոցով:

4. Թափառող կենդանիների բռնումը իրականացվում է կանխելու համաճարակների, վարակիչ հիվանդությունների տարածումը և վտանգը մարդու առողջության համար:

5. Թափառող կենդանիների բռնումը սպանելու նպատակով արգելվում է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

6. Թափառող կենդանիների բռնումը պետք է իրականացվի այնպիսի մեթոդներով, որոնք չեն վտանգում կենդանու կյանքը:

Հոդված 13. Ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահանջները

1. Կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպումը թույլատրվում է միայն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանված թույլտվության առկայության դեպքում:

2. Կենդանաբանական այգիների, ակվարիումների, տեռարիումների, վիվարիումների, դելֆինիարիաների, էկզոտարիումների, կենդանիների մասնակցությամբ կրկեսների և նմանատիպ կառույցների գործունեությունը կարգը սահմանում է կառավարությունը:

3. Ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների կամ նկարահանման համար օգտագործվող կենդանու հանդեպ արգելվում է կիրառել վարժեցման այնպիսի մեթոդներ, որոնք վնասում են կենդանու առողջությանը:

4. Արգելվում է կենդանու մասնակցությունը այնպիսի միջոցառմանը, ցուցադրմանը, մրցույթին կամ նկարահանմանը, որի արդյունքում կենդանին կարող է ենթարկվել խոշտանգումների, ստանալ վնասվածքներ, մատնվել սովի կամ ծարավի, հայտնվել կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում:

5. Կենդանու օգտագործումը միջոցառումների, ցուցադրման, մրցույթների կամ նկարահանման համար պետք է կազմակերպվի ապահովելով անվտանգության համապատասխան նորմեր մարդկանց և այլ կենդանիների համար:

6. Կենդանու օգտագործումը միջոցառումների, ցուցադրման, մրցույթների կամ նկարահանման համար պետք է կազմակերպվի սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմամբ:

Հոդված 14. Ծառայողական նշանակության կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահանջները

1. Ծառայողական կենդանիների բուծումը, վարժեցումը և պատրաստությունը նպատակային նշանակության գործողությունների համար կազմակերպվում է և իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից:

2. Ծառայողական կենդանիների վարժեցումից հետո/պատրաստման վերջում իրականցվում են ծառայողական կենդանիների թեստեր (հանձնարարական ստուգում), որից հետո այդ կենդանիներին օգտագործելու իրավունքի համար տրվում է սերտիֆիկատ (վկայագիր) տարբեր ծառայության նպատակներով:

3. Ծառայողական շների պատրաստությունն իրականացվում է կինոլոգիական կենտրոններում հատուկ նպատակային նշանակությամբ ծառայությունների համար մաքսային, ոստիկանական, փրկարարական ծառայության ոլորտներում, սահմանապահ զորքերում օգտագործելու համար և այլ ոլորտներում:

4. Պարեկության ժամանակ արգելվում է ծառայողական շների փոխանցումը կենդանու տիրապետման հետ կապ չունեցող անձանց կամ առանց հսկողության թողնելը:

Հոդված 5. Կենդանիների բուծումը

1. Բուծվող կենդանու նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը կարգավորվում է սույն օրենքով կենդանիներ տիրապետողների համար սահմանված պահանջների պահպանմամբ:

2. Կենդանիների բուծումը կարող է իրականացվել միայն միևնույն տեսակի սեռահասուն կենդանիների միջև:

3. Արգելվում է կենդանու նկատմամբ այնպիսի բնական կամ արհեստական բեղմնավորման իրականացումը, որի արդյունքում նոր սերնդի մոտ առաջանում են հիվանդություններ և անոմալ շեղումներ, այդ թվում՝

1) հենաշարժողական հիվանդություններ

2) խլություն

3) կուրություն

4) ատամների և գլխի դեֆորմացիա

5) ագրեսիվություն

4. Տնային կենդանիների բուծումը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից պետք է կազմակերպվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն ստացած բուծարանում:

Հոդված 16. Կենդանիների վաճառքը

1. Կենդանիների վաճառք իրականացնող կառույցների պատասխանատուները պարտավոր են ապահովել յուրաքանչյուր վաճառքի ենթակա կենդանու համար կերի և ջրի բավարար քանակություն, տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք և պայմաններ:

2. Կենդանիների վաճառքը կարելի է իրականացնել միայն մասնագիտացված խանութներում և կենդանիների շուկաներում՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված թույլտվության առկայությամբ և կենդանիների նույնականացման անձնագրերի պարտադիր առկայությամբ:

Հոդված 17. Կենդանիների պահումը կացարաններում

1. Կենդանիների կացարաններում կարող են պահվել թափառող, գտնված կամ ժամանակավոր պահման հանձնված կենդանիներ և կենդանիներ, որոնք չունեն պահող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

2. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են ապահովել պահվող կենդանիների կենսաբանական առանձնահատկություններին համապատասխան պայմաններ, բավարարել նրանց սննդի, ջրի, քնի, շարժման և բնականոն վարքի բոլոր պահանջները:

3. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են կացարանում պահվող կենդանիներին ենթարկել անասնաբուժական զննման և ապահովել համապատասխան բուժում, անհրաժեշտության դեպքում սահմանել կարանտին:

4. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են վարել կացարանում պահվող կենդանիների հաշվառում բոլոր այն տվյալների գրանցմամբ, որոնք թույլ կտան նույնականացնել կենդանուն:

5. Կորած կենդանին կացարանում հայտնվելով ենթարկվում է պարտադիր ստերջացման, եթե 7 աշխատանքային օրվա ընթացում տիրապետողը չի գտնվում:

6. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ գտնված կենդանու տիրապետողին գտնելու համար:

7. Կենդանիների կացարանների պատասխանատուները կենդանուն կարող են հանձնել տիրապետման միայն 16 տարին լրացած անձանց:

8. Կենդանիների կացարանը պետք է ունենա ինտերնետային հարթակ,որտեղ կտեղադրեն գտնված և կացարանում պահվող կենդանիների նկարները և այլ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 4

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Հոդված 18. Կենդանիների նկատմամբ գիտահետազոտական և գիտաուսումնական փորձերի կատարումը

1. Կենդանիների նկատմամբ փորձարկումներն իրականացվում են գիտաուսումնական, գիտահետազոտական նպատակներով և այն դեպքում, երբ այլընտրանքային մեթոդների կիրառումն անհնար է:

2. Կենդանիների նկատմամբ փորձարկումներն իրականացվում են լիազոր մարմնում հաշվառված ուսումնական, գիտահետազոտական, արդյունաբերական կազմակերպություններում և գյուղատնտեսության ոլորտում՝ փորձարկումների նպատակով կենդանիների օգտագործման թույլտվությամբ:

3. Փորձարկումների համար օգտագործվող կենդանիներին և փորձարկումներ իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները հաստատում է լիազորված պետական մարմինը:

Հոդված 19. Կենդանիների նկատմամբ գիտահետազոտական և գիտաուսումնական փորձեր կատարելու թույլտվությունը

1. Կենդանիների փորձարկում իրականացնող կազմակերպությունները լիազոր մարմին ներկայացնում են դիմում՝ փորձարկումների նպատակներով կենդանիների օգտագործման թույլտվություն ստանալու համար, որին պետք է կցվեն.

1) փորձարկման ենթակա կենդանիների տեսակների ցուցակը և քանակը, դրանց ընտրանքի հիմնավորումը, փորձարկման խափանման արդյունքում՝ խնամքի ձևը և տեղը.

2) փորձարկումներ իրականացնող անձանց ցուցակը և նրանց մասնագիտական որակավորման փաստաթղթի պատճենը:

2. Լիազոր մարմինն ուսումնասիրում է սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը և ներկայացված փաստաթղթերը և գործունեությանը ներկայացվող պահանջներին համապատասխանությունը:

3. Ներկայացված փաստաթղթերում թերություններ հայտնաբերելու դեպքում դրանց ստացումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը գրավոր տեղեկացնում է դիմողին:

4. Թերությունների բացակայության դեպքում կամ դրանց վերացումից հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը թույլատրում է գիտահետազոտական և գիտաուսումնական փորձի իրականացումը կամ հիմնավորված մերժում է, եթե չեն ներկայացվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը, և (կամ) լիազոր մարմնի կողմից հայտնաբերված գործունեությանը ներկայացվող պահանջների անհամապատասխանությունները չեն վերացվել:

5. Գիտափորձերի համար կենդանիների օգտագործման թույլտվությունը տրվում է 5 տարի ժամկետով:

6. Գիտափորձը իրականացնելու թույլտվությունը կամ դրա մերժումը բողոքարկվում է օրենքով սահմանված կարգով:

7. Կենդանիների նկատմամբ փորձարկումների իրականացման կազմակերպությունները նախապես ցուցված պայմանների որևէ տեսակի փոփոխության վերաբերյալ երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում կամ տեղեկացնում են լիազոր մարմնին:

8. Կենդանիների նկատմամբ փորձարկումների թույլտվությունը գրանցվում է լիազոր մարմնի հաստատած համապատասխան գրանցամատյանում, որտեղ լրացվում են՝

1) թույլտվությունը ստացած փորձարկման կազմակերպության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, ղեկավարի կամ տնօրենի անձնական տվյալները.

2) փորձարկում իրականացնող կազմակերպության տեսակը, գործունեության և գտնվելու վայրը.

3) փորձարկման ենթակա կենդանիների ցեղատեսակները.

4) փորձերի էությունը, նպատակը:

9. Արգելվում է՝

1) փորձերի նպատակով թափառող կամ տանը պահվող կենդանիների օգտագործումը:

2) աշակերտների կամ ուսանողների կողմից սեփական նախաձեռնությամբ կենդանիների նկատմամբ փորձարկումների իրականացումը:

ԳԼՈՒԽ 5

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՔՆԵՑՈՒՄԸ

Հոդված 20. Կյանքն ընդհատելու նպատակով կենդանիների քնեցման պահանջները

1. Կենդանիների քնեցումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից թույլտվություն ստացած կացարանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերով:

2. Քնեցումն իրականացվում է այնպիսի նյութերով, որոնք շատ արագ կերպով գիտակցության և ցավի զգացողության լրիվ կորստի են հասցնում կենդանուն՝ ենթարկելով մահվան:

3. Քնեցումից հետո անասնաբույժը որոշում է կենդանու մահացությունը՝ ստուգելով նրա սրտի աշխատանքը:

4. Անասնաբույժը քնեցման գրանցամատյանում գրանցում է քնեցման իրականացման և անասնաբուժական դեղամիջոցի կիրառման պատճառները:

5. Քնեցումը թույլատրվում է՝

1) անբուժելի հիվանդ կենդանիներին.

2) վարակիչ հիվանդության վերացման համար, որը սպառնում է մարդկանց կամ կենդանիների առողջությանը.

3) կենդանիների նկատմամբ փորձարկումների արդյունքում կենդանիներին ցավ և տանջանք պատճառող ախտաբանական չվերականգնվող փոփոխությունների դեպքում.

4) կենդանիներին, որոնց ագրեսիվ վարքագիծը մարդկանց և կենդանիների առողջության համար իրական վտանգ է ներկայացնում:

6. Քնեցման համար արգելվում է այնպիսի անասնաբուժական դեղամիջոցի կիրառումը՝

1) որի արդյունքում մկանները կաթվածահար են լինում՝ առանց կորցնելու ցավի զգացողությունը.

2) որը չի հանգեցնում գիտակցության կորստի:

7. Կենդանու կյանքի ընդհատումը ոչ քնեցման միջոցով թույլատրվում է հետևյալ դեպքերում՝

1) կենդանու ագրեսիվ վարքը սպառնում է մարդկանց և կենդանիների առողջությանը.

2) կենդանու կողմից հարձակման դեպքում անձի անհրաժեշտ պաշտպանության համար:

8. Գյուղատնտեսական նպատակով պահվող և բուծվող կենդանիների սպանդը և մորթը, այդ թվում՝ կրոնական նպատակով կատարվող ծիսակատարությունների համար կենդանիների մորթը կարգավորվում է «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

Հոդված 21. Անկած կենդանիների դիակների հավաքումը, ոչնչացումը և թաղումը

1. Անկած կենդանիների դիակների թաղման վայրերը որոշվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ բնակչության սանիտարահամաճարակային բարելավման, անասնաբուժական, շրջակա միջավայրի պահպանության, ճարտարապետական, քաղաքաշինության և շինարարական գործունեության օրենսդրության համաձայն:

2. Անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման կարգը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինը:

3. Արգելվում է կենդանիների թաղումը կամ դիակիզումը չնախատեսված վայրերում:

ԳԼՈՒԽ 6

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 22. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում

1. Սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով արգելված գործողությունների կատարումն առաջացնում է քրեական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի այլ դրույթների խախտումներն առաջացնում են վարչական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Հոդված 23. Եզրափակիչ դրույթ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված N 1

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի

ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՇՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ամերիկյան պիտբուլտերյեր

2. Յագդտերյեր

3. Ռոթֆեյլեր

4. Դոբերման պինչեր

5. Բուլտերյերներ. անգլիական, հարավաֆրիկյան բուրբուլ, անգլիական ստաֆորդշիրյան, վելշտերյեր

6. Գայլաշներ. իտալական, սարլոսյան վոլֆհաունդ, չեխական

7. Բուլդոգներ. ամերիկյան, հին անգլիական, մալյորկյան, ալապախյան օտտո

8. Դոգեր. արգենտինական, գերմանական բորդոյական, կուբայական, կանարյան)

9. Մաստիֆներ. բելգիական, իսպանական, տիբեթական, բրազիլիական, հնդկական, պակիստանյան, նեապոլիտանական (մաստինո), ճապոնական (տոսա-ինու), պիրենյան լեռնային, դանիական (բրոհոլմեր), բուլմաստիֆ

10. Հովվաշներ. հայկական գամփռ, գերմանական, կովկասյան գելխեղդ, իռլանդական գելխեղդ, միջինասիական ալաբայ գելխեղդ, հոլանդական, հունական, բերնյան զենենհաունդ, մեծ շվեյցարական զենենհաունդ, էշտրելյան պորտուգալական լեռնային, ակբաշ, հարավռուսական տավրիդյան, պիկարդյան, լեհական պոդգալյան տատրանյան, արևելաեվրոպական, հունգարական կոմանդոր, կուվաս, մարեմոաբրուդյան, կարտիական, բելգիական գրյունենդալ, լակենու, մոլինուա, տարվյուրեն, բերգամյան բերգամասկո, ֆրանսիական երկարամազ բիար, ատլասյան աիդի, պորտուգալական կաստրո լաբորեյրո, անատոլիական կարաբաշ, կանգալ, սլովակյան չուվաչ, ամերիկյան-կանադական սպիտակ

11. Ամերիկյան ստաֆորդշիրյան տերյեր

12. Հոկայդո աինու

13. Ամերիկյան ակիտա

14. Ակիտա-ինու

15. Տոսա-ինու

16. Կանե-կորսո

17. Ալանո իպանական

18. Շարպեյ

19. Նշված ցեղատեսակների խառնուրդները

Հավելված N 2

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի

ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Շներ

2. Կատուներ

3. Ակվարիումային ձկներ և կակղամորթեր

4. Թռչուններ (աղավնատեսակ, թութակատեսակ, ճնճղուկատեսակ, փասիանային)

5. Մանր կրծողներ (համստերներ, ծովախոզուկներ, դեկորատիվ մկներ, դեկորատիվ առնետներ, դեկորատիվ ճագարներ, դեգուներ, շինշիլաներ)

6. Մանր ոչ թունավոր սողուններ (կրեաներ, մողեսներ, օձեր)

7. Մանր ոչ թունավոր երկկենցաղներ (գորտեր, տրիտոններ, ակսոլոտլեր)

8. Տնային կզաքիսներ (ֆրետկա)

9. Գաճաճ խոզեր (մինի փիգ)

10. Հոդվածոտանի կենդանիներ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372[1]-15.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ-239 քաղաքացիական օրենսգրքի 145-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Իրավունքներն իրացնելիս կենդանիների նկատմամբ արգելվում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սկզբունքներին հակասող վերաբերմունքը»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372[2]-15.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական Իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 113-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 113. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով սահմանված պահանջների խախտումը

«1. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով սահմանված պահանջների խախտումը (բացառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասը) առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երեք հարյուրապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372[3]-15.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1 . Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի թիվ ՀՕ 528-ն քրեական օրենսգրքի 258[2] հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«*Հոդված 258[2] . Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը*

1. Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, այն է՝ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կենդանիների նկատմամբ արգելված գործողություններից որևէ մեկը կատարելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372[4]-15.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 32-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ հոդվածները ամբողջությամբ, 35-րդ հոդվածի 1-ին մասն ամբողջությամբ, 35-րդ հոդվածի 2-րդ մասի 1-14-րդ կետերը, 16-րդ կետի «բ» ենթակետը, 17-րդ,18-րդ և 19-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« ա. գառների, ուլերի, խոզերի և հորթերի պոչերի անդամատում»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372[5]-15.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածը լրացնել նոր 21-րդ կետով.

«21) համայնքում կենդանիների պաշտպանությունը»:

Հոդված 2. Օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր 10-րդ և 11-րդ կետերով.

«10) տալիս է համայնքի տարածքում կենդանիների վաճառքի թույլտվություն

11) տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն»:

Հոդված 3. Օրենքի 49-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր 50.1 հոդվածով.

«*Հոդված 50.1 Համայնքի ղեկավարի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում*

1. Համայնքի ղեկավարը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում:

2) իրականացնում է համայնքի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական գրանցամատյանների աշխատանքների վարմանը:

3) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման և ստերջացման աշխատանքները:

4) սահմանված կարգով տրամադրում է թույլտվություններ կենդանիների բուծարաններին և կացարաններին:

5) սահմանում է համայնքի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

2. Համայնքի ղեկավարը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը կանոնակարգող իրավական ակտերի մշակում և իր իրավասության սահմաններում դրանց հաստատում:

2) օրենքով սահմանված կարգով իրականացնում է վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում:

3) կենդանի տիրապետողից պահանջում և ստանում է կենդանի պահելուն առնչվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ և փաստաթղթեր:

4) կազմում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների խախտումների արձանագրությունները:

5) խախտումների մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է իրավապահ մարմիններին, միաժամանակ ձեռնարկում է միջոցներ իրավախախտումը կանխելու համար:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372[6]-15.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 58.1 հոդվածով՝

«Հոդված 58.1 Քաղաքապետի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Քաղաքապետը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում:

2) իրականացնում է Երևանի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների աշխատանքների վարմանը:

3) կազմակերպում է Երևանի տարածքում թափառող կենդանիների բռնման և ստերջացման աշխատանքները:

4) սահմանված կարգով տրամադրում է թուլտվություններ կենդանիների բուծարաններին և կացարաններին:

5) սահմանում է Երևանի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը՝սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

2. Քաղաքապետը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը կանոնակարգող իրավական ակտերի մշակում և իր իրավասության սահմաններում դրանց հաստատում:

2) օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում:

3) կենդանի տիրապետողից պահանջում է կենդանի պահելուն առչնվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ, փաստաթղթեր:

4) կազմում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների խախտումների արձանագրություններ:

5) խախտումների մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է իրավապահ մարմիններին, միաժամանակ ձեռնարկում է միջոցներ իրավախախտումը կանխելու համար»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ կետերով.

«4) վարչական շրջանի տարածքում, համաքաղաքային կանոններին համապատասխան, տալիս է կենդանիների վաճառքի թույլտվություն.

5) վարչական շրջանի տարածքում տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքը

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախագծի և հարակից օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական կարգավորումները լիարժեք չեն սահմանում և կարգավորում ոչ վայրի կենդանիների հետ կապված իրավահարաբերությունները, կենդանիների պաշտպանության իրավական մեխանիզմները:

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի նախագծով սահմանվում են կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում անձանց պարտականությունները և սահմանափակումները, կենդանիների նկատմամբ վերաբերմունքի պահանջներն ու արգելված գործողությունները,տնային կենդանիների պահման և խնամքի պահանջները, թափառող կենդանիների, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների, ծառայողական նշանակության, գիտահետազոտական և գիտաուսումնական փորձարկումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ վերաբերմունքի պահանջները, ինչպես նաև կենդանիների բուծման, վաճառքի և օգտագործման շուրջ իրավահարաբերությունները

Նախագծերի փաթեթով նախատեսվում է փոփոխություններ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում և ՀՀ քրեական օրենսգրքում՝ սահմանելով վարչական պատասխանատվություն «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով սահմանված պահանջների խախտման համար, իսկ կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք պարունակող արգելված գործողությունների համար քրեական պատասխանատվություն:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է լրացումներ և փոփոփություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում, որոնցում հստակ սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում: Նախագծերի ընդունման արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինները կստանձնեն լիազորություններ սույն օրենքով սահմանված պահանջների վերահսկողության ոլորտում, նաև կենդանիների հաշվառման, վաճառքի,թույլտվությունների տրամադրման, ինչպես նաև համայնքի տարածքում թափառող կենդանիների խնդրի լուծման ուղղությամբ:

Ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կենդանիների նկատմամբ կիրառվում են գույքի մասին ընդհանուր կանոնները՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներ: Գույքային իրավունքներն իրացնելիս հաշվի չի առնվում կենդանիների՝ որպես զգայական և կենսաբանական պահանջներ ունեցող, ցավազգաց էակներ լինելու հանգամանքը և սույն իրավունքների իրացման շրջանակում կենդանիները պաշտպանված չեն դաժան և անպատասխանատու վերաբերմունք պարունակող գործողություններից: Սույն նախագծերի փաթեթով առաջարկվում է լրացում կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, որով կենդանիների նկատմամբ իրավունքներն իրացնելիս կարգելվի «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով սահմանված պահանջների խախտումը:

Նախագծերի փաթեթով նաև առաջարկվում է՝ «Անասնաբուժության մասին» օրենքի այն հոդվածները, որոնք սահմանում են կենդանիների բարեկեցության սկզբունքները, տնային կենդանիների նկատմամբ վերաբերմունքի պահանջները, կենդանիներ տիրապետողների պարտականություններն ու իրավասությունները, փորձարկումների համար օգտագործվող կենդանիների շուրջ իրավահարաբերությունները ճանաչել ուժը կորցրած և սահմանել «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում՝ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի շուրջ ավելի համապարփակ և համալիր կարգավորումներ ունենալու նպատակով:

Օրենքի և նախագծերի մշակման փուլում ուսումնասիրվել է մի շարք երկրների փորձը ոլորտում, մասնավորապես Ավստրիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Ռուսաստանի, Լատվիայի, Էստոնիայի և մի շարք այլ երկրներում կենդանիների բարեկեցության հիմնական սկզբունքները, կենդանիների բնակակոն վարքի պահանջմունքները կարգավորող իրավական նորմերը, վերահսկողության և ապատասխանատվության մեխանիզմները:

Նախագծերի փաթեթի մշակման փուլերում մշտապես տեղի են ունեցել քննարկումներ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովում ձևավորված Կենդանիների պաշտպանության հարցերով աշխատանքային խմբի անդամների, ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների, կենդանասերների, պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ և վեր հանված խնդիրներն ու իրավական կարգավորումները դիտարկվել են նախագծերում:

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի նախագծի և հարակից նախագծերի ընդունման արդյունքում կկարգավորվեն կենդանիների շուրջ իրավարահարաբերությունները:Կհստակեցվեն ոլորտում վերահսկողություն իրականացնող

մարմինների լիազորությունները և բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը: Օրենքով նախատեսվող տնային կենդանիների հաշվառման գործիքակազմի ներդրման արդյունքում կվերահսկվի տերերի կողմից տնային կենդանիների՝ հատկապես շների լքելու դեպքերը, որը իր հերթին կնպաստի թափառող շների գլխաքանակի նվազեցմանը:

Նախագծերի ընդունման և կիրակման արդյունքում ակնկալվում է նվազեցնել կենդանիների նկատմամբ դաժան և անպատասխանատու գործողությունների քանակը և ունենալ իրավական մեխանիզմներ, որոնք կապահովեն կենդանիների բարեկեցությունն ու պաշտպանվածությունը: Օրենքի նախագծում նաև հստակ սահմանվում են հանրային վերահսկողության իրականացման մեխանիզմները քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք կարող են նպաստել բնակչության շրջանում կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը և կենդանիների հանդեպ մարդասիրական վերաբերմունքի քարոզչությանը: